ԱՐՄԵՆՈՑԻԴԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ. ՊԱՏՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՍԵՐԸ, ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՋՈՂՎԱԾ ՓՈՐՁԸ

Միեր Հարությունյան

Դոցենտ («Կաճառ» գիտական կենտրոն, ԼՂՀ)

Բանալի բառեր. *Եղեռն, պանթուրքիզմ, հանցագործություն, ուրացում, հատուցում, պատմական դասեր, հայրենատիրություն, պայքար, պատմական հիշողություն, պետականություն, բանակ, միացյալ Հայաստան*

Արդեն հարյուր տարի է, ինչ պահանջատեր հայ ժողովուրդն անդադրում հետամտում է պատմական արդարության վերականգնմանը: Երկարատև ու դժվարին պայքարը տվել է իր առաջին արդյունքը. բազմաթիվ երկրներ ճանաչել ու դատապարտել են քսաներորդ դարի առաջին ցեղասպանությունը, որին միայն 1915-ին զոհ է գնացել մեկ և կես միլիոն հայ: Իսկ 1895-1923 թվականների շարունակական ջարդերի ու էթնիկական զտումների անմեղ զոհերի թիվը մի քանի միլիոն է...

Բազմաթիվ երկրների առաջադեմ հասարակություններն այդ մեծ ոճիրը իրավամբ համարում են ոչ միայն հայ ժողովրդի, այլև համայն մարդկության դեմ գործված հանցագործություն, որը վաղեմության ժամկետ չունի: Մեր ժողովուրդը համոզված է, որ մի օր կգա հատուցման պահը և թուրք ոճրագործների նյուրնբերգը կկայանա... Սակայն, դեռ երկար ճանապարհ ունենք անցնելու, ազգովի՛: Եվ այդ երկար ճանապարհին մեզ անհրաժեշտ է լինելու հիշել անցյալի դասերը: Չէ՞ որ անցյալը սոցիալական կյանքի կուտակած փորձի մարմնացումն է: Մեր ժողովրդի՝ դարերի ընթացքում կուտակած փորձի ընդհանրացումն ու վերաիմաստավորումը երիցս անհրաժեշտ են մանավանդ ցեղասպանության 100-րդ տարելիցին[1]: Միայն այդ ճանապարհով կարելի է

[1] Թեմային մեր կողմից անդրադարձներ եղել են նաև նախկինում. տես Մեծ եղեռն-80.- «Մարտիկ», 21-27.04. 1995 թ., հմ. 16, էջ 1, Ի՞նչ է մեզ հուշում Հայոց մեծ եղեռնը- «Մարտիկ», 19-24 ապրիլ, 2004 թ., հմ. 17(571), էջ 4, Արմենոցիդի քաղաքականության ուրացումը և ապստամբության առասպելը (Շուշիի մարտյան ողբերգության 85-րդ տարելիցի առթիվ), «Ազատ Արցախ», 24 մարտի 2005, հմ. 34(1703), նույնը՝ «Մարտիկ», 19 – 26 մարտ 2005, թիվ 11(618), էջ 4 և գիտական տարբերակը՝ «Լրատու» (Գիտական հոդվածների ժողովածու), Ստ., 2008, հմ. 1, էջ 71-78, Отступление от политики арменоцида и миф о восстании (К годовщине мартовской трагедии в Шуши). «Азат Арцах», 26 марта 2005, но. 20(489), стр. 4, Վերստին Հայոց մեծ եղեռնի քաղաքական դասերի մասին, Հայաստան-Արցախ. պատմության և արդիականության զուգահեռներում (հոդվածների ժողովածու), գիրք առաջին, Ստ., «Դիզակ պլյուս», 2009, էջ 40-43, Շուշի-1920 թ.՝ պետականորեն կազմակերպված ահաբեկչության ու էթնիկական զտումների հերթական զոհը, «ԼՂՀ դատական իշխանություն», հմ. 1(5), 2012, էջ 23-30, Մեծ եղեռնի պատմաքաղաքական մի

գտնել արդիականության ամենահրատապ հարցերի պատասխանները: Այս առումով՝ ցեղասպանության պատմությունը ոչ միայն մեր ժողովրդի հիշողությունն է, նրա կենսագրության մռայլ էջը, այլ նաև ներկայի վրա ներազդող և ապագան ուրվանշող հզոր գործոն:

Այդ ողբերգական իրադարձության վերաիմաստավորումը կարևոր է հատկապես պատմական դասերի վերհանման առումով: Անտեսելով դրանք, մենք կարող ենք դատապարտվել ցեղասպանության ողբերգությունը վերստին ապրելուն: Հենց այս մտահոգությամբ էլ Արցախի հայ ազգաբնակչությունը մայրաքաղաք Ստեփանակերտում և հանրապետության այլ բնակավայրերում հերթական տարելիցի առթիվ իր հարգանքի տուրքն է մատուցում Հայոց մեծ եղեռնի անմեղ զոհերի հիշատակին և վերստին փաստում ցեղասպանության հետևանքների վերացման ու հանուն պահանջատիրության անդադար պայքարելու իր վճռականությունը:

Ներկա սերունդը գիտակցում է, որ հզոր և բարգավաճ պետականության կերտումը Հայրենատիրության առաջին և կարևոր փուլն է, Հայոց ցեղասպանության հետևանքները հաղթահարելու՝ մեր ժողովրդի բարոյական պարտքի կատարման, Եղեռնի միջազգային ճանաչման ու դատապարտման, ինչպես նաև Թուրքիային պատասխանատվության ենթարկելու երաշխիքը: Ակնհայտ է, որ առանց ազգային պետականության հնարավոր չէ կանխել ցեղասպանության վտանգը: Պետականության կորստի աղետալի հետևանքների գիտակցումը մեզ պետք է աչալուրջ պահի, անպայման գերակայի քաղաքական հովերին:

Թվում է, թե հասկանում ենք, որ դարեր շարունակ մեր ժողովրդի ձախողումների հիմնական պատճառը նրա միասնականության, համախմբվածության խաթարումն է եղել: Նաև գիտակցում ենք, որ պատմականորեն հատվածական հոգեբանություն ձեռք բերած մեր ժողովրդի պարագայում բազմակուսակցականությունը և այլախոհությունը, մանավանդ եթե դրանք խարսխված են անհանդուրժողականության ու հիվանդագին մրցակցության վրա, աղետալի հետևանքներ կարող են ունենալ: Բայց դեռևս չենք հանգել այն համոզմանը, որ համաժողովրդական համախմբումը պետք է կատարվի ազգային մեկ գաղափարի կամ գաղափարախոսության շուրջ, որի առանցքը կարող է լինել ամուր պետությունը, Հայոց մեծ եղեռնի հետևանքների վերացումը կամ Հայրենատիրությունը: Մեր հայրենիքին վերատիրելու դատապարտվածությունը հրամայաբար պահանջում է լինել մշտական պատրաստականության վիճակում, միահամուռ՝ մեր ազգային նպատակներին հասնելու գործում: Մանավանդ, որ պատմությունն էլ համառորեն ապացուցում է, որ ոչ թե օրհասական պահին պետք է համախմբվել՝ վերահաս ողբերգությանը դիմագրավելու, այլ՝ նախօրոք, այն կանխարգելելու, նրա

քանի դասերի մասին, «Հայաստանի Հանրապետություն», 25 ապրիլի 2014 թ., հմ. 73, էջ 5 և այլն:

իրականացմանը խոչընդոտելու համար[1]: Իսկ որպեսզի դա հաջողությամբ պսակվի, պետք է նաև կանխատեսել կարողանալ, ինչի համար էլ հենց կոչված են քաղաքական գործիչները: Քանիցս պատմությունը մեզ ուսուցանել է, իսկ Հայոց մեծ եղեռնի քաղաքական դասը՝ կրկին հուշել, որ միշտ էլ աղետալի հետևանքներ են ունենում օտար տերությունների ողորմածության վրա հույս դնելը, նրանց միջամտության վրա հաշվարկներ կառուցելը: Դասագրքային ճշմարտություն է այն, որ Հայկական հարցը միջազգային դիվանագիտության համար եղել է Թուրքիայի նկատմամբ ճնշում գործադրելու, արտաքին-քաղաքական հարցեր լուծելու միջոց:

Հայոց մեծ եղեռնի քաղաքական գլխավոր դասերից մեկը, թերևս, այն է, որ մեր պահանջատիրության համար պետք է ստեղծենք իրական հիմքեր, այսինքն՝ այն պետք է արտահայտվի մեր ժողովրդի ու պետության հնարավորությունների չափով, բխի մեր ներուժից և ուղիղ համեմատական լինի մեր պատրաստականությանը: Ցավոք, հաճախ մեր պահանջատիրությունը ուտոպիական է եղել, կառուցված օտարի հնարավոր միջամտության (աջակցության) և սխալ հաշվարկների վրա: Այսօր էլ այն մտայնությունն է, թե միջազգային հանրությունը և տերությունները, եթե ճանաչեն Հայոց ցեղասպանության փաստը, մեր պահանջատիրությունը կստանա նյութական-առարկայական հիմք: Բայց դա, ինչպես վկայում է մեր անցյալը, ինքնախաբեություն է, պատրանք, ցանկալին իրականության տեղ դնելու մոլորություն: Ասվածն ամենևին չպետք է հասկանալ որպես Հայոց մեծ եղեռնի միջազգային ճանաչմանը հասնելու համար պայքարի հանդեպ թերահավատության արտահայտություն, մանավանդ, որ այդ պայքարը, փաստորեն, Ադրբեջան-ԼՂՀ հակամարտությունում Թուրքիայի կողմնակալ մոտեցումներին հակազդելու միջոցներից մեկն է դարձել: Սակայն, հետամտելով այդ քաղաքականությանը, հարկ է զուգահեռաբար և, իհարկե, նաև հնարավորինս՝ առաջանցիկ կերպով մեծացնել Հայոց պետականության ներուժն ու հնարավորությունները, որպեսզի հարկ եղած դեպքում, մեզնից ազդեցիկ ուժ և վճռորոշ գործոն ներկայացնելով, կարողանանք այլևս թույլ չտալ մեր խնդիրը տերությունների միջև հարաբերություններ պարզելու միջոց (գործիք) դարձնելու արատավոր պրակտիկայի նոր դրսևորումներ:

Անհուսալի ու երիցս արդարացված չէ անվերապահորեն որևէ երկրի ռազմական օժանդակությանն ապավինելը, որովհետև օտարը չի կարող պաշտպանել մեր հայրենիքը այնպես, ինչպես՝ մենք ինքներս: Հետևաբար՝ մենք զոր ու գիշեր պետք է նախապատրաստվենք սեփական ուժերով մեր պետականությունը պաշտպանելուն և միշտ աչքի առաջ ունենանք հենց այդ հեռանկարը:

---

[1] ***Հարությունյան Մ. Ա.,*** Միասնության գերագույն արտահայտությունը՝ ինքնիշխան ու ազգային պետությունն է,- տես Հայաստան-Արցախ. պատմության և արդիականության զուգահեռներում (հոդվածների ժողովածու), գիրք առաջին, էջ 45-46:

Կասկած չի հարուցում այն, որ վերահաս ողբերգությանը կարելի է դիմագրավել երկարատև ու համառ պայքարի ոգու, հավատի ու ինքնավստահության միջոցով: Ցավոք, այդ որակներն ազգի մեջ դաստիարակելու գերխնդիրը լուծել չկարողացան ո՛չ հայ քաղաքական կուսակցություններն ու հոսանքները, ո՛չ հայ եկեղեցին ու ո՛չ էլ ազգային կրթական համակարգը: Դա էր, թերևս, հիմնական պատճառը, որ ժողովրդի դիմադրական շարժումը՝ ինքնապաշտպանությունը, տարերային ու տեղաբնույթ էր, ինչն, անշուշտ, բավական չէր այնպիսի մեծ խնդիրների լուծման համար, ինչպիսին Հայրենիքի պաշտպանությունն էր ու ժողովրդի փրկությունը կոտորածներից:

Դժվար չէ նկատել, որ ազատագրական պայքարի կամ համընդհանուր զինված ինքնապաշտպանության մարտավարությունը, ըստ էության ու հանգամանորեն չմշակվեց, ժողովուրդը դրան հետևողականորեն չնախապատրաստվեց, ինչը հաջողության գրավական կարող էր լիներ: Սրանից ելնելով՝ գոնե այսօր մենք պարտավոր ենք հստակեցնել մեր նպատակներն ու պահանջները Թուրքիայից, բարոյական հատուցում ակնկալելու մակարդակից դրանք տեղափոխելով միջազգային-իրավական հարթություն:

Արմենոցիդի հետևողական քաղաքականության իրողությունը մեզ հուշում է, որ չի կարելի եվրոպական միջավայրի քաղաքական գործընթացները կուրորեն ընդօրինակել ու փորձել դրանք կիրառել Ասիայում, մանավանդ՝ նրա ամենահետամնաց ու վայրենի մասում՝ Թուրքիայում: Այսինքն՝ մշտապես պետք է հաշվի առնել այն փաստը, որ Եվրոպան և Թուրքիան տարբեր միջավայրեր են՝ պատմական, սոցիալ-տնտեսական, ազգային և կրոնական անհամատեղելիությամբ: Ուստի, կարելի է վստահաբար պնդել, որ Թուրքիան չի հետևի Գերմանիայի օրինակին... Միանշանակ սնանկ են այն հույսերը, թե երբևէ Թուրքիան իբր այնքան քաղաքակիրթ կդառնա, որ ինքնակամ կճանաչի Հայոց ցեղասպանությունը (ի դեպ, այն ուրանալը և ժխտելը ևս հանցակցություն է): Զղջումը կարող է լինել սոսկ այն դեպքում, երբ Թուրքիան ծնկի բերվի մեր ռազմաքաղաքական, գիտատեխնիկական ու տնտեսական հզորության առաջ: Այսօր դա պետք է լինի մեր գերակա, համազգային խնդիրը: Այլ կերպ, քան զավեշտ չենք կարող որակել այն արհեստական վիճակը, երբ միջազգային որոշ կազմակերպություններ և նույնիսկ հայ քաղաքական գործիչներից ոմանք, ապարդյուն ջանում են հավատացնել, թե հնարավոր է բարիդրացիական հարաբերություններ ունենալ Թուրքիայի և Ադրբեջանի հետ, մինչդեռ Հայոց մեծ եղեռնը, դրա շարունակությունը մինչև 1920-ական թվականները, այդ թվում՝ նաև Արևելյան Անդրկովկասում, ընդհուպ մինչև 20-րդ հարյուրամյակի 80-90-ական թվականները, անդադար ահազանգում են ճիշտ հակառակի մասին: Պետք է հիշել, որ Թուրքիան և նրա կողմից ուրիշ ժողովուրդների տարածքներում ստեղծված Ադրբեջանը կմնան հայրենազրկված ազգերի ոխերիմ թշնամիները, քանի դեռ չեն ազատել նրանց պատմական հայրենիքը: Անկախ նրանից, թե ինչպիսի վարչակարգ է Թուրքիայում, նրա հետ համագործակցությունը լի է կանխատեսելի և անկանխատեսելի վտանգներով:

Հայաստանի ու Թուրքիայի հակամարտության հիմնական պատճառը պանթուրքիզմն է, որը գնալով ավելի սքողված, բայց և ահագնացող վտանգի բնույթ է ստանում:

Վերջին տարիներին հայագիտությունը զգալի ուշադրություն է դարձնում ցեղասպանության պատմության և միջազգային դատապարտման հասնելու հիմնախնդիրներին: Դա բխում է նաև ցեղասպանության մասին խոր գիտելիքներ և ճիշտ պատկերացումներ ունենալու անհրաժեշտությունից, ինչը թույլ կտա հենց վաղ դրսևորումներից ճանաչել այն և կանխել ողբերգությունը: Փաստը, որ 1915-ը շարունակություն ունեցավ ու կրկնվեց նաև Հայկական լեռնաշխարհի այլ մասերում և անգամ փորձարկվեց 1988-1992 թվականներին, վկայում է մեր անցյալը վատ գիտենալու և, ցավոք, պատմության դասերն անտեսելու մասին...

Մինչդեռ հարկ է մշտապես արթուն պահել պատմական հիշողությունը, նպատակային քարոզչությամբ, տեղեկատվությամբ ժողովրդին խանդավառել մայր հայրենիքին վերատիրելու գաղափարով, տոգորել նրան սեփական երկիրը սիրելու, հողին տեր կանգնելու, Հայրենիքի պաշտամունքի զգացմունքներով՝ արմատախիլ անելով օտարամոլությունը, հատկապես դժվար պահերին տաքուկ անկյուններ չվելու հակումը: Անցյալից դասեր քաղելը մշտական բնույթ պետք է կրի, ինչը թույլ կտա հրատապ սրբագրումներ մտցնել հետագա զարգացման մարտավարության և ռազմավարության մեջ: Պարտավոր ենք մշտապես հիշել, որ թիկունքից ևս մի հարված հասցնելու համար մեր թուլացմանը սպասող, թշնամի հարևաններ ունենք:

Տարածված մտայնություն է Հայոց ցեղասպանությունը հրեական ողջակիզման հետ համեմատելը: Եթե երևույթի նմանության մասին կասկած լինել չի կարող, ապա ցեղասպանությունից դասեր առնելու առումով զգալիորեն զիջում ենք հրեաներին: Այսօր Իսրայելը հզոր երկիր է բազմամիլիոնանոց արաբական աշխարհի կենտրոնում, տիրապետում է ազգային անվտանգության ապահովման գլխավոր միջոցի՝ միջուկային զենքի, և ոչ երկրորդական ազդեցություն ունի համաշխարհային գործընթացների վրա: Դա արդեն ցեղասպանության հետևանքները վերացնելու լուրջ հայտ է: Անկասկած, հրեաների նպատակասլաց գործելու օրինակը պետք է հրապուրի մեզ՝ որպես ազգ ու պետություն հզոր լինելու մեր ձգտումներում: Մնում է հուսալ, որ Հայոց մեծ եղեռնի զոհերի հիշատակի ոգեկոչումը, անցյալի դասերի սերտումը ազգային համախմբման, հավատի ու վստահության խթան կդառնան, հզոր ու բարգավաճ պետություն կերտելու ճանապարհով մեր ազգային անվտանգությունն ու արժանապատվությունը մեր իսկ ոգեղեն կամքի և բազկի միջոցով ապահովելու պատգամ կլինեն:

Ադրբեջանի նախահարձակմանը դիմագրավելու համար հայ ժողովուրդը 1988-1994 թվականներին մղեց իր հայրենական պատերազմը և ոչ միայն պաշտպանեց իր հայրենիքում ապրելու անկապտելի իրավունքը, այլ նաև ազատագրեց թուրք-ադրբեջանական զավթիչների կողմից 1918-1923 թվականների ընթացքում էթնիկական զտումների, ցեղասպանության ու

պետական ահաբեկչության միջոցով բռնազավթված բուն հայկական մի շարք տարածքներ, որոնք կազմում էին պատմական Հայաստանի մասը… Ներկա և գալիք սերունդներն ուղղակի դատապարտված են վաղ թե ուշ հետ բերելու կամ ազատագրելու մեր պատմական հայրենիքի բոլոր եզերքները… Սա է արմենոցիդի քաղաքականության հետևանքների վերացման միակ ուղին, որը նպատակաուղղված է Հայրենատիրության գերնպատակի հետևողական իրականացմանը…

Թուրքական սվինների միջոցով ստեղծված Ադրբեջանը, որը 1918 թվականից սկսած Արևելյան Հայաստանում իրականացնում է հայ ազգաբնակչության էթնիկական զտումներ, ցեղասպանություն և հայրենազրկում, որպես Թուրքիայի որդեգրած արմենոցիդի քաղաքականության շարունակություն, նախահարձակման անցնելով և ներխուժելով պատմական Արցախի տարածքները, սկսեց թուրքերին յուրահատուկ դաժանությամբ բռնատեղահանել ու կոտորել բնիկ հայ ազգաբնակչությանը: Պաշտպանական ու ազատագրական բազմաթիվ մարտերով Արցախի հայ ազգաբնակչությունը, համայն հայության աջակցությամբ, խափանեց Ադրբեջանի զավթողական նկրտումները, տապալեց զենքի ուժով Արցախյան հիմնահարցը լուծելու Բաքվի պլանները, պաշտպանեց հող հայրենին և վերընձյուղված Հայոց պետականությունը, այնուհետև, ռազմական ծանր պարտությունների մատնելով նախահարձակ հակառակորդի զինված ուժերին, անվտանգության հուսալի գոտի ստեղծեց ԼՂՀ-ի շուրջ, լռեցրեց ազգաբնակչության համար մահացու վտանգ ներկայացնող բազմաթիվ թշնամական կրակակետեր, ազատագրեց պատմական հայրենիքի որոշ տարածքներ: Մարտնչող ժողովուրդը հարկադրեց Ադրբեջանին, որը Թուրքիայի հրահրմամբ շարունակ համառում ու խուսափում էր ռազմական գործողությունների անհապաղ դադարեցումից, ի վերջո, վարել բանակցություններ և համաձայնության գալ հրադադարի շուրջ: Հիմնականում այդ հաղթանակների, պատերազմի ընթացքում գծված ու ժամանակի քննությանը դիմացած բնական սահմանների և ԼՂՀ պաշտպանության բանակի մարտունակության շնորհիվ տարածաշրջանում հաստատված հրադադարը պահպանվում է ավելի քան երկու տասնամյակ, ինչը, նախ և առաջ, ուժերի հավասարակշռության արդյունք է: Պաշտպանական ու ազատագրական մարտերի շնորհիվ արցախցին վերահաստատեց իր բնօրրանում ապրելու, ազատ ու անկախ գոյավիճակի իր իրավունքը, ստանձնեց նախնյաց սխալների ու բացթողումների սրբագրման առաքելությունը՝ վերստին իրական նախադրյալներ ստեղծելով ու հույսեր առաջացնելով Միացյալ Հայաստանի վերականգնման համար...

Հավատացած ենք, որ դա վաղ թե ուշ լինելու է, իսկ մինչ այդ մեզ անհրաժեշտ է, նախ և առաջ, ամրապնդել ու պաշտպանել բոլոր ձեռքբերումները, զարգացնել ու հզորացնել Հայոց պետականությունը, ունենալ մարտունակ ու զորեղ բանակ, հայրենասեր, համակողմանիորեն պատրաստակամ միլիոնավոր սերունդներ, մրցունակ ու առաջանցիկ տնտեսություն, ինչպես նաև վերաբնակեցնել ու հայրենիք դարձնել ազատագրված բոլոր տարածքները...

Ամփոփում

Արդեն հարյուր տարի է, ինչ պահանջատեր հայ ժողովուրդն անդադրում հետամտում է պատմական արդարության վերականգնմանը: Մեր ժողովրդի՝ դարերի ընթացքում կուտակած փորձի ընդհանրացումն ու վերաիմաստավորումը անհրաժեշտ են մանավանդ ցեղասպանության 100-րդ տարելիցին: Միայն այդ ճանապարհով կարելի է գտնել արդիականության ամենահրատապ հարցերի պատասխանները: Այս առումով ցեղասպանության պատմությունը ոչ միայն մեր ժողովրդի հիշողությունն է, այլ նաև ներկայի վրա ներազդող և ապագան ուրվանշող հզոր գործոն:

Ադրբեջանը, որը 1918 թվականից սկսած Արևելյան Հայաստանում իրականացնում է հայ ազգաբնակչության էթնիկական զտումներ, ցեղասպանություն և հայրենազրկում, Թուրքիայի որդեգրած արմենոցիդի քաղաքականության շարունակողն է: Ադրբեջանի նախահարձակմանը դիմագրավելու համար հայ ժողովուրդը պաշտպանեց իր հայրենիքում ապրելու իրավունքը, նաև ազատագրեց 1918-1923 թվականների ընթացքում, էթնիկական զտումների, ցեղասպանության ու պետական ահաբեկչության միջոցներով բռնազավթված բուն հայկական մի շարք տարածքներ, որոնք կազմում էին պատմական Հայաստանի մասը: Սա է արմենոցիդի քաղաքականության հետևանքների վերացման միակ ուղին, որը նպատակաուղղված է Հայրենատիրության գերնպատակի հետևողական իրականացմանը…

Императив – ликвидация арменоцида: политико-исторические уроки, удавшийся опыт Арцахской войны

Мгер Арутюнян

Резюме

Ключевые слова: *Геноцид, пантюркизм, преступление, отречение, возмещение, уроки истории, борьба, историческая память, государственность, армия, единая Армения.*

На протяжении ста лет армянский народ требует восстановления исторической справедливости. Обобщение и переосмысление многовекового опыта очень важно для нашего народа, тем более сейчас, накануне 100-летия Геноцида армянского народа. Только таким путем можно найти ответы на актуальные вопросы современности. Геноцид - не только историческая память нашего народа, но и фактор, влияющий на настоящее и определяющий ее будущее.

Продолжая проводимую Турцией политику арменоцида, Азербайджан с 1918 года, осуществляет в Восточной Армении политику этнических чисток и геноцида армянского населения. Отразив военную агрессию Азербайджана, армянский народ не только защитил неотъемлемое право жить на родной земле, но и освободил часть исконно армянских земель, захваченных азербайджано-турецкими агрессорами в 1918-1920 годах. И это единственно правильный путь, направленный на ликвидацию последствий политики арменоцида и достижение сверхцели – стать хозяевами своей страны.

Imperative: The Urgency of the Liquidation of the Armenocide (Armenian Genocide): Political-Historical Lessons, the Artsakh War Useful Experience

Mher Harutyunyan

Summary

Key words: *Genocide, Pan-Turkism, crime, disavowal, compensation, lessons of history, struggle, historical memory, statehood, army, united Armenia.*

The Armenian people have been demanding to restore the historical justice for a hundred years. On the eve of the Armenian Genocide 100th centenary it has become particularly important for our people to sum up the centuries-long experience and to ponder it over.

Only that way we can find the solutions for the most actual issues of present day. The Armenian Genocide is not only the historical memory of our nation but it is also a mighty factor which affects our present and determines our future.

Being the successor of the Armenocide policy of Turkey, Azerbaijan has been carrying out the programs of the ethnical cleansing and genocide of the Armenian population since 1918.

Resisting the military aggression of Azerbaijan the Armenian people not only defended their ultimate right to live on their native land but also liberated part of the historical Armenian territories which were occupied by Azeri-Turkish forces from 1918-1920.

Only defense and resistance can make it possible to liquidate the consequences of the Armenocide and to reach the all-Armenian supreme goal-that is to become the master of our own land, our motherland.